ափը դէպի նայողը, ինչպէս տեսնում ենք կոպտական արուեստի մէջ։ Վերջապէս Զորագետի աջ կողմը, երկաթուղու Ախտալա կայարանից դէպի հարաւ, Կողբ աւանի հին աւերակն է, ուր թէեւ դեռ պեղումներ չեն կատարուած եւ ճշդուած



Պատկ · 36

հողի տակ թաղուած եկեղեցու յատակագիծն ու ճարտարապետական ոճը, բայց պատահական կերպով երեւան եկած քանդակները հելլենական ազդեցութիւնն են մատնանշում, այստեղ եւս կայ մի կոթող, տարաբաղդաբար եղծուած վիճակում մեզ հասած։ Միւսների մասին պիտի խօսենք յետոյ։

Ահա այսչափ մեզ յայտնի գերեզմանական կոթողների փաստագրութիւնը իրենց մօտ եղած բազիլիկ շէնքերի մնացորդներով։ Բայց մենք հաւատացած ենք, որ նրանց թիւը աւելի է Հայաստանում, եւ ուր բազիլիկ շէնքեր կան կամ մնացորդներ, այնտեղ էլ կարելի կը լինի նման կոթողների մնացորդներ գտնել, եթէ ամենակուլ ժամանակը կամ մարդկային բարբարոսութիւնը իսպառ չէ անհետացրել նրանց։ Այդ գերեզմանական